

**Պատասխաններ**  
**հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի հարցաշարերի**

**10-րդ դասարան**

1. .... ուրախությունից մնացին կարկամած. հետապնդող զինվորները կանգնել ու չէին համարձակվում առաջ գալ: Երաժիշտները հասել էին իրենց երկիրը: Վերնագիր՝ Հայրենի հողի բույրը, Մայր հողի բույրը, Հայրենի հողի շունչը, Մայր հողի կանչը և այլն
2. մայր, սուրբ, պայծառ, դժբախտ, դրախտային, անընկճելի, սրբազան, հյուրընկալ, անպարտ, գմբուխտաշող, լուսավոր, փթթուն, շենշող և այլն
3. **բղջախոհ** – վավաշոտ, անառակաբարո, տոփասեր, ցանկասեր,  
**հարձ** – վարձակ, վարձու կին՝ պարուհի  
**նանրամիտ**– դատարկամիտ, անխելք, նաև՝ գծուծ, ճղճիմ  
**հացկատակ**– պնակալեզ, շողոքորթ, քսու, շողոմ, քծնող, երկերեսանի, փարիսեցի  
**կոչնական** – հյուր, հրավիրրյալ, հրավիրված անձ,  
**աստանդակ**– տարագիր, պանդուխտ, նժդեհ, վտարանդի  
**ասպագեն** – ձիու զենք ու զրահ, նաև՝ ձիու թամբը, ասպանդակը և սանձը,  
**քառասմբակ**– քառատրոփ, քառարշավ, արշավասույր, ձիու արագ վազքի այն տեսակը, երբ երիվարը չորս ոտքերը միաժամանակ բարձրացնում է օդի մեջ,  
**ասպագեն**  
**ադոթարան**– այգաբաց, լուսաբաց, արևածագ, արշալույս, առավոտ, վաղորդայն  
**շամանդաղ**– մեզ, մշուշ, մառախուղ, մուժ, թուխպ
4. ա) ընդհանուր գծագրությամբ երևալ, պատկերանալ, բ) փխբ. ձև ստանալ, ձևավորվել, գ) փխբ. նշմարվել, երևալ, դ) փխբ. պատկերանալ, անդրադառնալ, արտացոլվել, արտապատկերվել
5. **կանոն**– կանոնակարգ, կարգուկանոն, կանոնապահ, կանոնավոր, կանոնապահ, անկանոն, տարականոն,  
**կույս**– կուսակալ, կուսակից, տարակուսանք, տարակուսություն, տարակուսելի,  
**անց** – անցում, անց, առանցք, անանց, անանցանելի, գետանց, անցարգել, անցաթուղթ, անցագիր,  
**հակ**– հակում, հակված, հակամետ, անձնահակ, գլխահակ
6. **դեգերել**– աշխարհից աշխարհ ընկնել, աշխարհը ոտքի տակ տալ և այլն,  
**գայրանալ**– ափերից դուրս գալ, արյունն աչքը կոխել և այլն,  
**գլխատել** – գլուխը թոցնել, սրի քաշել,  
**սահմոկել**– լեղին ճաքել՝ ջուր դառնալ, լեղին պատռվել, արյունը երակներում սառչել,
7. արևմուտք, կնամեճար, զրախոսություն, սրբագրիչ
8. Բժի՛շկ, նախ քեզ բժշկի՛ր/ բուժի՛ր/ - նշ.՝ նախ ինքդ քեզ ուղղի՛ր, հետո ուրիշներին դաստիարակի՛ր: Ըստ Աստվածաշնչի:
9. Դժվարին վիճակից դուրս գալու միջոց՝ հնար: Ըստ հունական դիցաբանության՝ Թեսեոսը Կրետեի արքայի դստեր՝ Արիադնայի տված կծիկի օգնությամբ կարողանում է դուրս գալ լաբիրինթոսից:

**Գնահատման չափանիշներ**  
**հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի հարցաշարերի**

**10-րդ դասարան**

2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
9. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր: